Լ. ԱՃԵՄՅԱՆ

ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԻ

Հոսքը մեր քաղաքական անկախության վերատացման 30 տարիների մասին է։ Վեց դար առաջ էր, որ ան՝ անկախությունը, սրդողած, վշտացած, հեռացել էր մեզանից, մեր Հայրենիքի այս նվիրական հողերից։

Ու նրանից հետո աշխարհի բոլոր դժբախտությունները թափվեցին մեր երկրի վրա, ու նրանից հետո աշխարհի բոլոր տառապանքները տեսավ մեր ժողովուրդը։ Տեսավ նա ու դառն կերպով զղջաց իր արածի համար, մորմոքելով զղջաց 600 տարի։ «...Տուր աշխարհիս խաղաղութիւն, ազգիս հայոց՝ ազատութիւն» մրմնջաց, միշտ հուսալով, միշտ սպասելով, որ վերադառնա նա։ Լսեց անագորույն թշնամին «ազատություն» բառը, կատաղեց և արգելեց մեզ կրկնել այն, նրա մասին մտածելն իսկ արգելեց, և մենք ստիպվեցինք դողահար շրթներով թոթովել՝ «ազգիս հայոց՝ այցելութիւն...»։

Չտարակուսեցինք երբեք, որ նա պիտի գար վերջ ի վերջո։ Եթե տարակուսեինք, հուսահատեինք այդ մասին, այսօր արդեն անցյալում սուզված մի հիշատակ միայն պիտի լինեինք։ «Ժողովուրդները սուրով չեն մեռնում, բայց անճնասպան են լինում» ասվել է. իսկ մենք այն ժողովուրդն էինք, որ մի օր գրել էինք աշխարհի ահեղ բռնավորներից մեկին. «Ցայսմ հաստատ զմեզ ոչ ոք կարէ խախտել... արա զինչ եւ կամիս...» («Այս հավատքից ոչ ոք չի կարող մեզ խախտել... արա՛ ինչ որ կամենում ես...»)։

***

Հայոց պատմության բեկման շրջանը հանգիստացավ 1920 թվի նոյեմբերը։ 30 տարի է, որ հայ ժողովուրդը, իր սեփական բախտի տեր դարձած, ապրում է իր ոսկեդարը։ Հազարավոր տարիների կյանք ունեցող մի ժողովրդի համար, որ շատ անգամ եղեգի ճկունությամբ խոնարհվել է, բայց միշտ վերականգնել, 30 տարին, որպես քանակ, շատ աննշան մի ժամանակաշրջան է։ Բայց նա մեծ է մեր ժողովրդի համար իր բովանդակությունովը, որի մասին 30 տարի առաջ երբեք չէինք էլ կարող երազել։ Որբերի, արցունքի և աղքատության երկրից, թշնամու կրնկի տակ մահամերձ փռված մեր դժբախտ երկրից, այսօր ահա մի հրաշագեղ Հայրենիք ենք կերտել, ռուս մեծ ժողովրդի, սովետական մյուս ժողովուրդների եղբայրական օգնությամբ, դարմանելով մեր վնասները, բուժելով մեր վերքերը, գոնե այնքան, որքան հնարավոր է մարդկորեն։

Աշակերտ-ուսանողների թիվը, որ առաջ մի քանի հազարի մեջ էր, այսօր 300,000-ի է բարձրացել։ Եթե 1914 թվականին Հայաստանի բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող լուսավորության տարեկան ծախսը կազմում էր 39 կոպեկ, 1950 թվականին յուրաքանչյուր քաղաքացու տարեկան ծախսը կազմում է 421 ռուբլի։

Նախապատերազմյան հնգամյակների ընթացքում, ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրանքն աճեց 15 անգամ, իսկ 1949 թվականին, 1940 թվականի համեմատությամբ, արտադրանքի թողարկումն ավելացավ 215 տոկոսով։

30 տարի առաջ սովից մեռնող մեր երկիրը ներկայիս արտադրում է 400 տեսակ սնունդական նյութեր։

Դեռ հինգ տարի առաջ, 1945 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, էլեկ-

տրոէներգիայի արտադրությունն աճել էր ավելի քան 85 անգամ։

Առաջ հայ գյուղը բացարձակապես զուրկ էր էլեկտրականությունից։ Այսօր ավելի քան 100,000 կոլտնտեսականների բնակարանները լուսավորված են «Իլյիչի լամպ»երով։

Աննախընթաց չափով աճել է գիրն ու գրականությունը, բարձրացել ժողովրդի մտավորական մակարդակը։



Ցորենի հունձը կոմբայնով

Բարեկարգվել են շատ գյուղեր, շքեղացել, մեծացել քաղաքները։

Անճանաչելիորեն փոխվել է մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաք Երևանը իր լայնարձակ պողոտաներով, իր թովիչ պարտեզներով ու պուրակներով, իր շքեղ շինություններով։ Երևանի նոր թաղերն ու շինությունները, մանավանդ Բաղրամյանի անվան պողոտան, որի երկու կողմերի վրա պատմության մեջ ավանդված Անիի ճարտարապետական սքանչելիքները եկած կարգի կեցած են կարծես, քեզ հիշեցնելու համար անցյալը, քեզ երևակայել տալու համար գալիքը, եթե չխանգարեն մեր ճիգերն ու մեր ոգորումները դուրսի չարաղետ ուժերը։

Մեր Երևա՜նը... Ու դեռ նա վերջին այս մի քանի օրերի մեջ զարդարվեց երեք շքեղ արձաններով՝ Սովետական Միության կրկնակի հերոս օդաչու Նելսոն Ստեփանյանի կիսանդրիով, քաղաքի կենտրոնում, Կիրովի անվան մանկական պարտեզում, Խ. Աբովյանի ամբողջական արձանով, քաղաքի հյուսիս-արևելյան ծայրամասում, բարձր դիրքի վրա սքանչելի կառուցվածքով, և Ի. Վ. Ստալինի հսկա մոնումենտ-քանդակով Քանաքեռի սարահարթի վրա և տեսանելի Երևանի ամեն կողմից։ Նոյեմբերի 29-ին, Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 30-ամյակի օրը, մեծ և հուզիչ հանդիսությամբ, կատարվեց բացումը արձանին այդ մեծանուն մարդուն, որ 30 տարի առաջ նախաձեռնողն ու կազմակերպողն եղած էր մեր ժողովրդի փրկության գործին, և որի հոգածությունն ու խնամքը անպակաս եղավ մեր երկրի վրայից։ Եվ այդ մոնումենտի ներկայությունը Քանաքեռի սարահարթի վրա, հայացքը դեպի

Մասիսը, ինձ ներշնչում է այն հավատը, թե անպակաս պիտի լինի նրա հայրական գորովը մեր ժողովրդի նկատմամբ, և թե նա սիմվոլն է այն ուժին, որի պաշտպանության տակ միայն հանգիստ ենք ու ապահով։

Բայց ո՞վ պիտի պատմե այն բոլոր սերերի, բոլոր հույսերի մասին, որ արտասահմանի մեր տարահալած հարազատներինը եղավ երկար տարիների ընթացքին, նաև այն կարոտների և հոգեմաշ սպասումների մասին, որ այդ հայրենաբաղձ բազմություններին եղավ և է ներկայիս էլ, բայց որոնց չտրվեց հասնել իրենց երազին։ Ունենալ Հայրենիք, լսել ամեն օր, ամեն վայրկյան նրա նվաճումների, նրա վերելքների և սփոփարար կյանքի մասին, ունենալ այդ Հայրենիքում սրտահատորներ՝ մրրկավ կամ կամովին զատված և զրկված, արգելված լինել նրան հասնելու, նրա մեջ ապրելու, նրանով մխիթարվելու, ուրախանալու ու նրան ծառայելու մարդկային տարրական իրավունքից— կա՞ արդյոք ավելի մեծ զրկանք քան այդ մեկը, ավելի մեծ հոգեկան տառապանք, քան թափառականի այդ կյանքը։ Բայց, անխիղճ ու բարոյազուրկ որոշ մարդկանց համար ձեռնտու չէ հայության համախմբումը իր հայրերի երկրի մեջ. նրանք հակառակում են ներգաղթին։ Անցյալ 30 տարիների ընթացքում, շնորհիվ Սովետական Միության եղբայրական օժանդակության, կարելի եղավ ազատել մի մեծ թիվ այդ տարահալածներից։ Նրանք այսօր արդեն խառնված իրենց հարազատներին, աշխատում են Հայրենիքի բարգավաճման, առաջադիմության համար։ Նրանց զավակները լցրել են հայրենի ուսումնարանները և պատրաստում իրենց համար երջանիկ ապագա։

Այսօր, մեր Հայրենիքի բարեբաստիկ 30-ամյակին առթիվ, բերկրանքով կխայտա սիրտը Հանուր Հայության, բերկրանքով կխայտան հոգիները նաև մեր բյո՜ւր և բյո՜ւր նահատակներին, որոնք ընկան գաղափարի Հանապարհի վրա, մեզ կտակելով սեր, նվիրում, պաշտամունք դեպի վերածնված Հայաստանը։ Հանուր Հայությունն այսօր մաղթում է երջանկություն, է՛լ ավելի բարգավաճ կյանք մեր Հայրենիքին, մաղթում է ուրիշ անթիվ երեսնամյակներ։